7 Յունիս, 1999

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Պատրիարք Երուսաղէմի

Սիրելի Սրբազան Եղբայր

Ցայտնում ենք Ձեզ, որ Վեհափառ Հայրապետի որոշմամբ Հռոմի Կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբութիւն Յովհաննէս – Պօղոս Բ Պապի այցը Հայաստան յետաձգւում է՝ մինչ նոր տեսութիւն:

Վեհափառ Հայրապետը այս որոշումը կայացրել է նկատի առնելով բուժող բժիշկների յանձնարարականը, որով Նորին Սրբութեանը խորհուրդ չի տրւում ծանրաբեռնուած աշխատել: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը արտայայտել է համանման կարծիք Յունիսի 4ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում գումարուած նիստում:

Վեհափառ Հայրապետի սոյն որոշման մասին Վատիկանին ծանուցել է Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանը:

Սիրելի Սրբազան, մեր եղբայրական սէրը եւ ջերմագին բարեմաղթանքները յղելով Ձեզ եւ պատրիարքութեանդ բարեպաշտ հաւատացեալներին, խնդրում ենք Ձեր հանապազօրեայ աղօթքներով Ամենակալ Տիրոջից շարունակել հայցել բարի ապաքինում եւ լիակատար առողջութիւն Վեհափառ Հայրապետին:

Աղօթակից
Գարեգին Արք. Ներսիսեան
Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ

14 Յունիս, 1999

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Պատրիարք Երուսաղէմի

Սիրելի Պատրիարք Սրբազան Հայր,

Ի գիտութիւն տեղեկացնում եմ, որ Նորին Սրբազնութիւն Յովհաննէս–Պօղոս Բ. Պապը Լեհաստանից Հռոմ վերադարձի ճանապարհին ս. թ. Յունիսի 18ին մի քանի ժամով զուտ անձնական, ոչ պաշտօնական այցելութիւն պիտի կատարի Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետին որպէս եղբայրական սիրոյ արտայայտութիւն Վեհափառի ծանր հիւանդութեան առիթով:

Նկատի ունենալով, որ Պապի Հայաստան սոյն այցը չի փոխարինում Վեհափառ հայրապետի առողջութեան պատճառով յետաձգուած պաշտօնական այցին, հրապարակային–պաշտօնական բոլոր ընդունելութիւններն ու միջոցառումները չեն կայանալու:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութիւնը, Հայաստանի Թեմական առաջնորդները, Հանրապետութեան նախագահի հետ Նորին Սրբութեանը դիմաւորելու են օդանավակայանում եւ ուղեկցելու Սուրբ Էջմիածին, Վեհափառ Հայրապետի մօտ՝ մտերմիկ զրոյցի: Զրոյցից յետոյ՝ Յովհաննէս–Պօղոս Բ. Պապը կ'առաջնորդուի Մայր Տաճար, մեկնումից առաջ իր աղօթքը առ Աստուած կատարելու:

Սիրելի Պատրիարք Սրբազան Հայր,

Ընդունեցէք ջերմ բարեմաղթանքներս կենաց արեւշատութեան եւ գործոց յաջողութիւնների:

Աղօթակից՝
Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեան
Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ

digitised by A.R.A.R.@

29 Յունիս 1999

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեան
Պատրիարք Երուսաղէմի

Սիրելի Սրբազան Պատրիարք,

Խոր վշտով յայտնում ենք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանում Յունիսի 29ին, Երեքշաբթի օրը, ժամը 17.50ին անժամանակ, կեանքի 67րդ տարում հանգեաւ ի Տէր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ երկարատեւ եւ ծանր հիւանդութիւնից յետոյ:

Սգացեալ մեր եկեղեցու ողջ հոգեւոր դասի եւ մեր բարեպաշտ ժողովրդի աղօթքներով հայցում ենք, որ Ողորմածն Աստուած զքայ երանաշնորհ սիրելի մեր Հայրապետին, եւ Իր անխոնջ ծառայի հոգին ընդունի երկնային նուիրական հանգստարաններում: Մեր աղօթքն է նաեւ որ Տէրը պարգեւի մեր ժողովրդին եւ մեզ ամենքիս Ս. Հոգու մխիթարութիւնը:

Սիրելի Սրբազան Պատրիարք, խնդրում ենք տեղեկացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածին Ձեր շուտափոյթ ժամանման մասին:

Վշտակից,
Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսեան
Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ

ԲԺԻՇԿՆԵՐՈՒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Առողջապահութեան Նախարարի 30 Յունիսի հրամանաւ ստեղծուած մասնագիտական յանձնաժողովը, ներկայացուցած է մասնագիտական եզրակացութիւն մը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանման մասին: Յանձնաժողովը, որուն մաս կը կազմեն՝ Առողջապահութեան փոխ-նախարար՝ Ա. Աթաբէկեան (Նախագահ), մասնագէտ-բժիշկներ՝ Ս. Տիլանեան, Փրոֆ. Հ. Գալուստեան, Տօչ. Գ. Անժէլով, Փրոֆ. Ն. Վարդազարեան, Ս. Ղալումեան, Մ. Յարութիւնեան, Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի անձնական բժիշկ Ռ. Յովհաննիսեան յայտարարեցին հետեւեալը.

«Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1998էն ի վեր կը տառապէր լեզուի չարորակ նորագոյացութենէ: Ախտորոշումէն ետք, Ամենայն Հայոց Վեհափառը վիրահատուած եւ ճառագայթային դարմանումներ ստացած է Նիւ Եորքի ուռուցքաբանական հեղինակաւոր կեդրոններէն մէկուն մէջ: Դարմանումէն ետք, Վեհափառ Հայրապետը միշտ գտնուած է բժիշկներու հսկողութեան ներքեւ:

Կաթողիկոսը կը տառապէր սրտի իշէմիկ հիւանդութենէ եւ շաքարախտէ: Վերջին երեք տարիներուն ընթացքին, հակառակ ձեռնարկուած միջոցներուն, Ամենայն Հայոց Կաթողիկոսի առողջական վիճակը վատթարացաւ: 29 Յունիս 1999-ին ժամը 17.50ին, 67 տարեկան հասակին մէջ Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետը վախճանեցաւ՝ լեզուի չարորակ նորագոյացութեան հետեւանքով առաջացած ինտոքսիկացիայի (թունաւորման) եւ սիրտ-անօթային համակարգի անբաւարարութեան պատճառաւ»:

Յանձնաժողովի անդամներ՝
Ա. Աթաբէկեան (նախագահ), Ա. Սարգսեան, Ս. Տիլանեան, Հ. Գալուստեան, Գ. Անէլով, Ս. Ղալումեան, Մ. Յարութիւնեան, Ռ. Յովհաննիսեան (Անձնական Բժիշկ)

digitised by A.R.A.R.@